Աղբյուրներ

Բնակարանով ապահովված լինելը մարդու իրավունք է:
Այստեղ կան լրացուցիչ աղբյուրներ , որոնք կարող են օգնել ձեզ, ձեր ընտանիքին եւ ձեր հարեւաններին գտնել եւ պահպանել բնակարան:

California Civil Rights Department:
800-884-1684 (voice) 800-700-2320 (TTY)
California's Relay Service at 711 www.calcivilrights.ca.gov

U.S. Department of Housing and Urban Development (HUD):
(800) 347-3739 www.hud.gov

State of California Department of Consumer Affairs:
(800) 952-5210 www.dca.ca.gov

CA Mobile Home Ombudsperson:
(800) 952-5275 www.hcd.ca.gov

Project Sentinel: housing.org

National Housing Justice: nhlp.org

Housing Rights Center, Los Angeles: hrc-la.org

Legal Aid Foundations, Los Angeles: lawhelpca.org

Bay Area Legal Aid: baylegal.org

Fair Housing Orange County: fairhousingoc.org

Fair Housing Council of Central California: fhc-cc.org

Eden Council for Hope and Opportunity: echofairhousing.org

Fair Housing Council of Riverside County, Inc: fairhousing.net

Fair Housing Council of San Diego: fhcsd.com

Fair Housing Napa Valley: napafairhousing.org

Fair Housing Advocates of Northern California: fairhousingnorcal.org

Inland Fair Housing and Mediation Board: ifhmb.com

ԻՄԱՑԵ՛Ք ՁԵՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՎԵԼՈՒ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՐԴԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Դուք Ունեք Իրավունքներ:

Բնակարանով ապահովվելու հարցում խտրականությունը լուրջ եւ համընդհանուր խնդիր է: **Դուք ունեք իրավունքներ եւ պաշտպանություն:** Կալիֆորնիայի օրենքը պաշտպանում է վարձակալներին եւ տան սեփականատերերին խտրականությունից եւ ոտնձգություններից՝ հիմնված <<պաշտպանված բնութագրերի>> վրա, որը կարող է ընդգրկել ձեր՝

- Տարիքը
- Ռասան, մաշկի գույնը
- Նախնիներին, ազգային ծագումը
- Կրոնը
- Մտավոր կամ Ֆիզիկական հաշմանդամությունը
- Սեռը, գենդերը
- Սեռական կողմնորոշումը
- Գենդերային ինքնությունը, գենդերային արտահայտումը
- Գենետիկական տեղեկությունը (ինչպես օրինակ՝ գենեմուտացիայի կամ քրոնիկ խանգարման հավանականություն)
- Ամուսնական կարգավիճակը
- Ընտանեկան կարգավիճակը (ընտանիքներ՝ 18 տարեկանից ցածր երեխաներով)
- Եկամտի աղբյուրը
- Ներգաղթի կարգավիճակը
- Հիմնական լեզուն
- Քաղաքացիությունը
- Զինվորական/վետերանի կարգավիճակ

1. Հավասարություն







Դուք Հավասար Վերաբերմունք Ստանալու Իրավունք Ունեք

Բնակարան ունենալու արդար օրենքներն արգելում են անհավասար վերաբերմունք վարձակալության, վերանորոգումների, դեպոզիտների եւ վարձավճարների դեպքում՝ հիմնված ձեր պաշտպանված բնութագրերի վրա:

Խտրականության նշանները ներառում են այն բնակարան տրամադրողներին, ովքեր՝

- կասկածի տակ են դնում կամ խուսափում են հանդիպել միայն կոնկրետ ռասայի կամ ազգության հյուրերին, ոչ մյուսներին
- Թույլատրում են Սուրբ Ծննդյան զարդարանքներ կամ խաչելություններ հանրային վայրերում, բայց արգելում են այլ կրոնների համար ընդհանուր զարդարանքներ, ալտարներ կամ առարկաներ
- Միայն վարձակալում եմ կոնկրետ կրոնների անձանց
- Խնդրում են ձեզ կամ ձեր հյուրերին զերծ մնալ սիրո հրապարակային դրսեւորումներից, այն պատճառով որ դուք ԼԳԲՏՔ եք, կամ ներռասայական զույգի մաս եք կազմում, կամ պաշտպանված բնութագրերին առնչվող այլ պատճառներով:
- Մերժում են վերանորոգում կատարել ձեզ համար, որովհետեւ հակակրում են ձեր ազգային ծագումը, կամ սեռականությունը կամ հաշմանդամությունը, կամ այն, որ դուք չեք խոսում նույն լեզվով:

Որոշ մեկնաբանություններ կամ հարցեր կարող են հուսահատեցնել ձեզ դիմել այդ բնակարանի համար կամ կարող են դրսեւորել խտրականություն: Խտրականության նշանները կարող են ընդգրկել՝

- Հատուկ շարադրված հարցեր ձեր անձնական բնութագրերը բացահայտելու համար, ինչպես օրինակ <<Ո՞ր երկրից եք դուք>>, <<Դուք ծրագրու՞մ եք երեխաներ ունենալ>> կամ <<Դուք գնու՞մ եք եկեղեցի>>:
- Ասում են ձեզ, որ դուք չեք հավանի տարածաշրջանը, կամ, որ դուք ավելի շատ կհավանեք մեկ այլ շենք (շինություն), քան այն մեկը, որի համար դուք դիմում եք
- Մեկնաբանություններ՝ կապված էթնիկական կարծրատիպերի հետ, ինչպես օրինակ, ձեզ մեղադրելը մակաբույծների հետ կապված խնդիրներում, այն պատճառով, թե որտեղից է եկել ձեր ընտանիքը
- Բնակարանը ձեր զանգելու ժամանակ հասանելի է եղել, սակայն, երբ դուք այցելել եք, արդեն զբաղված է եղել
- Բազմաբնակարան շենք, որտեղ տարբեր ռասայի մարդիկ առանձնացված են
- Մեկնաբանություններ, որոնք ենթադրում են մերժում՝ հիմնված պաշտպանված բնութագրերի վրա, ինչպես օրինակ <<Միայնակ կինը կարող է իրեն ապահով չզգալ այստեղ>>, կամ <<Սա ընտանեկան շենք է. համոզված եմ դուք չեք համապատասխանում այս շենքին ձեր ապրելակերպով>>:

2. Եկամուտ



Դուք Ունեք Բուժօգնություն Ստանալու Հավասար Իրավունք՝ Անկախ Ձեր Եկամտի Աղբյուրից

Կալիֆորնիայի օրենքը արգելում է բնակարան տրամադրողներին ձեր նկատմամբ խտրականություն դրսեւորել՝ կախված ձեր եկամտի աղբյուրից: <<Եկամուտը>> ուղղակի աշխատավարձը չէ: Եկամուտը ներառում է Սոցիալական Ապահովություն, Անվտանգության Լրացուցիչ Եկամուտ (SSI), վետերանների նպաստներ, CalWorks, Ընդհանուր Օգնություն, երեխաների աջակցություն, ալիմենտ, գործազրկության ապահովագրություն եւ թոշակ:

Բնակարան տրամադրողները չեն կարող՝

- Պահանջել աշխատանքի ապացույց, մի քանի տարվա կայուն աշխատանքի ապացույց, կամ վարձակալել միայն նրանց, ովքեր աշխատանք ունեն
- Մերժել վարձակալել կամ պահանջել ավելի բարձր դեպոզիտ՝ ոչ-աշխատավարձային եկամտի պատճառով
- Նախապատվություն տալ մասնագետներին (պրոֆեսիոնալներին) կամ կոնկրետ ոլորտի մասնագետներին, ինչպես օրինակ՝ տեխնոլոգիական կամ բժշկական աշխատողներին

Եթե դուք ունեք Բաժին 8-ի վաուչեր, դուք կարող եք նաեւ ունենալ HUD կամ այլ գործակալությունների կողմից իրականացվող իրավունքներ:

3. Երեխաներ

Դուք Ձեր Երեխաների Հետ Միասին Բնակարանով Ապահովվելու Իրավունք Ունեք

Բնակարան տրամադրողը չի կարող արգելել երեխաներին (Լիցենզավորված <<մեծահասակների բնակարան>>-ը միակ բացառությունն է): Նրանք չեն կարող չափազանց խիստ կանոններ կամ հայտարարություններ անել, որոնք ետ կպահեն ընտանիքներին բնակարանի բոլոր հատվածները օգտագործելուց:

Ապօրինի Կանոնների օրինակներ են՝

- <<Ընդհանուր տարածքներում երեխաները պետք է հսկողության տակ լինեն ամբողջ ընթացքում >>
- << Ընդհանուր տարածքներում հեծանիվներ կամ սքեյթբորդներ չեն թույլատրվում >>
- <<Լվացքատանը կարող են գտնվել միայն Մեծահասակները>>
- <<Ավտոկայանատեղիում խաղալ չի թույլատրվում>>

Ապօրինի գործողությունների օրինակներ են՝

- Ձայրանալ ձեր երեխաների վրա բակում խաղալու համար
- Նախազգուշացումներ՝ ուղղված ձեզ՝ օրվա ընթացքում ձեր երեխաների աղմուկի պատճառով
- Առգրավել առարկաները՝ ինչպես օրինակ խաղեր, հեծանիվներ, սքեյթբորդներ եւ սկուտերներ
- Հայտարարություններ, որոնք ետ են պահում ընտանիքներին այդտեղ տեղափոխվելուց, ինչպես օրինակ՝ <<Այս շենքը այդքան էլ համապատասխան չէ երեխաների համար >>, կամ <<Այստեղ խաղալու տեղ չկա>>
- Դուրս հանել /վտարել/ ձեզ՝ գիշերները ձեր երեխայի լացի պատճառով
- Դուրս հանել /վտարել/ ձեզ կամ պահանջել ձեզ տեղափոխվել ավելի մեծ բնակարան՝ ձեր հղիության որոշման կամ երեխա որդեգրելու կամ օրինական խնամքի տակ վերցնելու որոշման պատճառով

4. Սենյակակիցներ



Եթե Դուք Ունեք Սենյակ, Դուք Իրավունք Ունեք Սենյակակցի

Կեցության չափանիշները՝ սահմանափակել մարդկանց քանակը, ովքեր կարող են ապրել միասին՝ կարող են համարվել խտրական, եթե դրանք պատճառ չունեն՝ հիմնված են բնակարանի չափի եւ նախագծի վրա կամ խոչընդոտում են ընտանիքներին վարձակալելուց:

Այն, ինչը ենթադրում է ողջամիտ սահմանափակում կախված է զանազան հանգամանքներից, օրինակ՝ ներառյալ շինության տեղային օրենքները, շինության քառակուսի մետրը, կոյուղու համակարգի սահմանափակումները, բնակվողների տարիքները:

5. Լեզու

Դուք Իրավունք Ունեք Օգտագործել Ձեր Նախընտրելի Լեզուն

Մասնավոր բնակարաններ տրամադրողները պարտավոր չեն ձեզ թարգմանիչ տրամադրել, բայց պարտավոր են խոսել թարգմանչի հետ, ում դուք կտրամադրեք, եւ պետք է թույլատրեն անձնակազմին, ով խոսում է ձեր լեզվով հաղորդակցվել ձեզ հետ այդ լեզվով:

Վարձակալությունը, որի շուրջ դուք քննարկում եք ծավալում Անգլերենից բացի այլ լեզվով, պետք է թարգմանվի տվյալ լեզվով:

Բնակավայրի համար գովազդը միայն Անգլերենից բացի ուրիշ լեզվով նախապատվություն է տալիս ուրիշների նկատմամբ կոնկրետ ազգային ծագման կամ էթնիկաների անձանց, եւ թույլատրելի չէ:

6. Ուղեկցող Կենդանիներ



Դուք Իրավունք Ունեք Ձեր Ուղեկցող Կենդանին Ունենալ

Բնակարան տրամադրողները անհրաժեշտության դեպքում պետք է ձեզ թույլ տան պահել կամ ձեռք բերել ուղեկցող կենդանի՝ որպես ողջամիտ բնակեցություն ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամության համար՝ առանց ընտանի կենդանու դեպոզիտի կամ լրացուցիչ վարձավճարի: Բնակարան տրամադրողները չեն կարող ունենալ ուղեկցող կենդանու ցեղատեսակի կամ չափերի սահմանափակումներ, բայց պարտավոր չեն հաստատել դիմումը, եթե կենդանին առողջության կամ անվտանգության համար ուղղակի սպառնալիք է ներկայացնում կամ կարող է պատճառ հանդիսանալ գույքի էական վնասի:

Հիշե՛ք՝ ուղեկցող կենդանիները ընտանի կենդանիներ չեն: Բնակարան տրամադրողները կարող են պահանջել տեղեկատվություն այն մասին, որ ձեզ անհրաժեշտ է ուղեկցող կենդանի, բայց նրանք իրավունք չունեն լրացուցիչ տեղեկություններ պահանջելու, ինչպես օրինակ բժշկական ախտորոշում: Զգուշացե՛ք օնլայն սերտիֆիկատներից <<Հուզական աջակցության կենդանիներ>>— սա բավական չէ ձեզ ցույց տալու համար, որ անհրաժեշտ է կենդանի ձեր հաշմանդամության դեպքում ձեզ օգնելու համար:

7. Հաշմանդամություն

Դուք Իրավունք Ունեք Բնակարան Ձեռք Բերելու՝ Անկախ Հաշմանդամությունից

Դուք **ինտերակտիվ գործընթացների** իրավունքներ ունեք ձեզ բնակարան տրամադրողի հետ՝ սահմանելու **բնակության ողջամիտ հարմարություններ**, որոնք փոխում են շինության քաղաքականությունը, կանոնը կամ փորձը, որպեսզի ձեզ ցույց թույլ տան օգտագործել եւ վայելել ձեր տունը: Բնակության ընդհանուր ողջամիտ հարմարությունները ընդգրկում են՝

- Մեքենայի կայանումը բնակարանին որքան հնարավոր է մոտ վայրում
- Ուղեկցող կենդանիներ
- Խնամակալներ՝ ներառյալ համատեղ բնակվող խնամակալներ
- Ֆինանսական հարմարություններ, ինչպես օրինակ համա-ստորագրողներ կամ հատուկ ուշադրություն, եթե ձեր հաշմանդամությունը ձեր ցածր եկամտի կամ վատ կրեդիտի միակ պատճառն է

7. Հաշմանդամություն



Անօրինական է համարվում թույլ չտալ ձեզ ձեւափոխել ձեր տունը՝ ձեր սեփական ծախսերի միջոցով՝ ձեր հաշմանդամությանը ողջամիտ ձեւով հարմարացնելու համար: Զգուշացե՛ք այլ ընդհանուր խախտումներից, ինչպիսիք են՝

- Հրաժարվել վարձելուց՝ ձեր հաշմանդամության պատճառով՝ իրական հաշմանդամության կամ ձեզ բնակավայր տրամադրողի կողմից ուղղակի ենթադրյալ, կարծեցյալ հաշմանդամության պատճառով
- Ձեզ վարձակալելուց հուսահատեցնելը կամ մերժելը վարձակալել հասանելի բնակարանը՝ ձեր շարժունակության խանգարման պատճառով:
- Ավելի բարձր դեպոզիտ պահանջելը, եթե ձեր անվասայլակը քերծում է պատերը եւ հարկերը
- Հրաժարվում է ձեզ համար կարդալ ձեր բնակարանային փաստաթղթերը՝ չնայած ձեր տեսողության խանգարմանը

8. Ներգաղթի Կարգավիճակ



Դուք Իրավունք Ունեք Չտրամադրել Ձեր Ներգաղթի Կարգավիճակը

Կալիֆորնիայի բնակարան տրամադրողները կարող են չպահանջել ՄՆ-ի կողմից տրված նույնականացման վկայական՝ ինչպես օրինակ՝ վարորդական իրավունք, վիզա, Սոցիալական Ապահովության համար: (Կրեդիտի եւ տվյալների ստուգումները կարող են իրականացվել անունի եւ նախկին հասցեի միջոցով): Բնակարան տրամադրողները պետք է ընդունեն արտասահմանյան երկրների կողմից թողարկված նույնականացման վկայականները, ինչպես օրինակ՝ Հյուպատոսական ID Քարտեր եւ անձնագրեր: Նրանք չեն կարող պոտենցիալ վարձակալներին հարցնել՝ արդյոք նրանք երկրում գտնվում են օրինական հիմքով

9. Ոտնձգություն

Դուք Բնակավարան Ստանալու Իրավունք Ունեք Առանց Ոտնձգության

Ոտնձգությունները ձեզ մեկուսացնում են եւ ստիպում են ձեզ անհարմար զգալ ձեր պաշտպանված կարգավիճակի պատճառով:

Հասարակ օրինակներ են՝ մտահոգիչ հայտարարությունները, վիրավորանքը, վարձավճարի գումարի նվազեցման դիմաց սեռական ծառայություններ կամ ժամադրություն առաջարկելը: Բնակարան տրամադրողները կարող են նաեւ պատասխանատու լինել այլ վարձակալների պահելածեւի համար:

Ոտնձգությունների վերջին օրինակներից են՝

- Ձեզ կամ ձեր ներգաղթյալ ընտանիքին <<ապօրինի>> անվանելը
- Ձեզ կամ ձեր Մուսուլմանական ընտանիքին <<ահաբեկիչներ>> անվանելը
- Ձեր սեռական կյանքի վերաբերյալ վիրավորական հարցերը տալը
- Ոտնձգություն իրականացնել ձեր նկատմամբ կամ ճնշել ձեզ ձեր կրոնական հավատների համար
- Ձեր ընտանիքի ուտելիքի հոտից կամ ձեր լսած երաժշտության տեսակից բողոքելը

Խտրականություն

Կալիֆորնիայի օրենքը պաշտպանում է վարձակալներին եւ բնակարան ձեռք բերողներին խտրականությունից եւ ոտնձգություններից՝ ռասայի, մաշկի գույնի, կրոնի, ազգային ծագման, նախնիների, հաշմանդամության, սեռի, գենդերի, գենդերային ինքնության, գենդերային արտահայտման, սեռական կողմնորոշման, եկամտի աղբյուրի, ամուսնական կարգավիճակի, ընտանեկան կարրգավիճակի, գենետիկական տեղեկության, տարիքի, ներգաղթի կարգավիճակի, հիմնական լեզվի կամ քաղաքացիության պատճառով: Այս բնութագրերը պաշտպանված են խտրականությունից օրենքով՝ համարյա ցանկացած տեսակի բնակարան ձեռք բերելու եւ ապրելու համար:

Ֆիզիկական կամ իրավաբանական անձը, ով ղեկավարում է ձեր բնակարանի ընտրությունը կամ բնակարանին առնչվող ցանկացած ծառայությունը չի կարող խտրականություն դրսեւորել ձեր նկատմամբ: Սա ներառում է՝

- Անշարժ գույքի սեփականատերերին
- Մենեջերներին
- Սպասարկող անձնակազմը
- Անշարժ գույքի գործակալներին /բրոկերներ/ եւ գործակալներին
- Տան սեփականատերերի ասոցացիաները
- Շարժական տների կայանատեղիները
- Բնակարանի տեղային իշխանություններին եւ կառավարություններին
- Հյուրանոցի, մոթելի եւ հանգստյան տների սեփականատերերին եւ մենեջմենթ ընկերությունները

Հարեւաններ

Օրենքն անգամ արգելում է ոտնձգություններ ձեր հարեւանների կողմից՝ հիմնված պաշտպանված բնութագրերի վրա, եւ կարող է պատասխանատվության ենթարկել բնակարանը տրամադրողին ձեր հարեւանների ոտնձգությունների համար, եթե զգուշացումից հետո կշարունակվեն նմանատիպ ոտնձգությունները

CRD







Քաղաքացիական իրավունքների վարչություն առաքելությունն է պաշտպանել Կալիֆորնիայի մարդկանց անօրինական խտրականությունից՝աշխատանքում, բնակարանով ապահովվման եւ հանրային շինություններում, ինչպես նաեւ ատելության բռնության եւ մարդկային թրաֆիկինգի գործողություններից: Եթե դուք կարծում եք, որ ձեր նկատմամբ խտրականություն է դրսեւորվել զանգեք, այցելեք կամ օնլայն դիմում ներկայացրեք ԱԱԲԱԴ (CRD):

Եթե դուք հաշմանդամություն ունեք, որը ձեզ թույլ չի տալիս օնլայն նախնական գրավոր դիմում ներկայացնել, էլեկտրոնային կամ փոստային տարբերակով, ԱԱԲԱԴ (CRD) կարող է աջակցել ձեզ նախնական դիմում կազմել հեռախոսի միջոցով, խուլ կամ ծանր լսողություն ունեցող անձանց կամ արտաբերության խնդիր ունեցող անձանց համար՝ California Relay Service (711) միջոցով, կամ զանգեք մեզ ձեր VRS միջոցով հետեւյալ հեռախոսահամարով՝ (800) 884-1684 (ձայնային): Հանդիպում նշանակելու համար կապ հաստատեք Հաղորդակցության Կենտրոնի հետ հետեւյալ հեռախոսահամարով՝ 800-884-1684 (ձայնային) կամ800-700-2320 (TTY) կամ էլ. տարբերակով՝ contact.center@calcivilrights.ca.gov: ԱԱԲԱԴ (CRD) անհրաժեշտության դեպքում պարտավորվում է տրամադրել հասանելիություն մեր նյութերին՝ այլընտրանքային ձեւաչափով՝ որպես խելամիտ բնակություն վայր հաշմանդամություն ունեցող անձանց համար